




ՀԱՆԳԻՍՏ ՀՈԳԻՈՅ

Լ. ՓԻԼԻՊՊՈՍ ՎՐԴ. ԵԱՏԻԿԵԱՐԵԱՆԻ



Տարեւոյ Նոյեմբեր 8-ի իրիկունը Միարանու-
թեան երկրորդ ժողովուրդական պարտիզանական
Վ. Հ. Փիլիպպոս Վրդ. Ետիկարեան, կարճատեւ հի-
ւանդութենէ մը վերջ, սուրբ խորհուրդներով
զորացած կնքեց իր մահականացուն, 76-ամեայ
Հասակին, մեծ ցաւ պատճառով Ուիլսոն րոյր
Հայրերուն եւ իր հեռուոր ազգականներուն:

Մինչ սրտի դառն կտրիւնով կը հաղորդենք այս
զոյժը, միւս կողմէ նուիրական պարտականու-
թիւն կը համարենք անգամ մը եւս աչքէ ան-
ցնել լուսահոգի Հօր անցելու, անոր երկարամ-
եայ զործունէութիւնը յաւերժացնելու եւ զոյգն
պսակ մը զետեղելու իր շիրմին վրայ:

Հանգուցեալը ծնած է Կարին, 1875 Ապրիլ 19-ին
եւ սուրբ աւագանէն կոչուած Կարապետ: Տասն-
եամեակ տարեկանին եկած է Ս. Ղազար, ուր ութ-
ամեայ ուսումներէ վերջ, 1894-ին սուրբ ուխ-
տերով նուիրուած է Աստուծոյ եւ անդամակցած
Միարանութեան: Տարի մը վերջ, 1895 Ապրիլ
14-ին քահանայական սուրբ աստիճանին բարձրա-
ցած է եւ այնուհետեւ նուիրուած է դաստիարակ-

չական եւ ուսուցչական առարկային, զբեթէ ամ-
բողջ յիշմամբեակ մը:

Իր զործունէութեան զլխաւոր վայրն եղած է
Մուրադ-Ռափայէլեան վարժարանը, ուր յայտ-
նուած է իրրեւ օրինակելի դասախօս մը 1895-էն
ի վեր. եւ կանուխէն ցոյց տուած է խնամատ հոգի
մը վարժարանին ուսումնական ծրարքին վերա-
կազմութեան մէջ:

Վարժարանին ուսումնական եղած է նախ 1901-
1902 տարեշրջանին, ապա 1907-1910 տարեշր-
ջաններուն, եւ հուսկ յաջողութեամբ վարած է
նոյնին տեսչութիւնը 1910-1916 տարիներուն:

Մեծ դարկ տուած է վարժարանին զիտական
մակարդակին եւ հաստատած է բնագիտական ու
տարբալուծական փորձարաններ:

Ի բնէ օժտուած զիտական բարձր հասկա-
ցողութեամբ եւ զեղարուեստական նուրբ ճաշա-
կով, ամէն ինչ ըրած է բարձրացնելու եւ ազ-
նուցնելու համար աշակերտներու միտքն ու
սիրտը. եւ այսօր ալ իր աշակերտները, աշխարհի
չորս կողմերէն, մեծ յարգանքով կը խոնարհին
իր յիշատակին առջեւ:

Վարած է նաեւ մատակարարական պաշտօններ,
վանքին, Փատուայի եւ Մ.-Ռափայէլեանի մէջ:

Հմուտ էր յատկապէս անգլիերէնի, զոր մինչեւ
վերջ կը մշակէր ու կը դասաւանդէր: «Բաղմա-
վէպ»ի մէջ ալ կ'երեւէր մերթ բնդ մերթ անդ-
լիական գրականութենէ հայացուցած էջերով:

Հրատարակած է իրր թարգմանութիւն «Ալե-
տալի դիպուածք իոլանտիոյ» պատմական վէպը
1896-ին: Հրատարակած է նաեւ Alfred Tenny-
son-ի «The May Queen» զբոյժը, բնագրով եւ
խաղերէն թարգմանութեամբ 1920-ին: Ունի տա-
կաւին կարգ մը անտիպ աշխատութիւններ եւս:

1935-էն ի վեր առանձնացած էր Ս. Ղազար
ուր կ'անցընէր իր օրերը ինքնամփօփ խորհրդ-
դատութիւններով: 1945-ին հանդիսապէս տօնուած
է վանքին մէջ իր քահանայութեան յիշմամբեայ
յուրեւանը, որու մասին գրած ենք ժամանակին:

Տարիներէ ի վեր առողջական վիճակը կը աւ-
կարանար. ենթակայ էր արեան յորդութեան, որ
հուսկ պատճառ եղաւ անակնկալ մահուան:

Մինչ դառն վշտով կ'ողորմեք լուսահոգի Հայր
Փիլիպպոս Վրդ.ի մահը, ազօթքով կը հայցենք
բարեգութ Յիսուսէն, որ երկնքի մէջ վարձատրէ
անոր հոգին, եւ անոր անխնջ վաստակներուն
փոխարէն՝ անճառ պսակներով փառաւորէ: Ու ան
ալ, Միւրթարեան միւս հոգեւոյս Հայրերու հոյին
հետ, երկնքէն բարեխօս ըլլալ՝ ապագայ սերունդ-
ներու լաջողութեան եւ սրբութեան համար:

Հ. Ն. Տ. Ն.

ՇՆՈՐՀԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՅԱԾ ԵՆՔ

ԱԹՄԱՃԵԱՆ ՄԱՌԻ. - Աստեղաբաղ (քերթուած-
նէր, 1947-1951): Փարիզ, ապ. Պ. Էլէկէան,
1951, էջ 116:

ԱՅԳՈՒՆԻ ՎԱՉԳԷՆ. - Պատմութեան զիրքս (Դա-
սակիրք Հայոց Պատմութեան) Ա. տարի, ա-
ւանդական շրջան. Բ. տարի, Ուրարտու եւ Ար-
տաշիսեան շրջան: Պէյրութ, ապ. Հայկ, 1951,
էջ 67, 125:

ԱՐՄԷՆ ՀՐԱՆԴ Ք. - Մեծն Տիգրան: Անթիլիաս,
ապ. Կթղ. Կիւ. 1947, էջ 207:

ԱՐՄԷՆ ՀՐԱՆԴ Ք. - Խորենացի, եղբէն եւ Հ.
Ներսէս Աղիեան: Երուսաղէմ, ապ. Ս. Յա-
կոբեանց, 1951, էջ 109 (փոքրագիր):

ԴԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ. - Թուղթ Հերբան. 1951,
ապ. Անթիլիաս, էջ 51:

ԻՇԽԱՆ ՄՈՒՇԵՂ. - Հացի եւ լոյսի համար: Պէյ-
րութ, ապ. Համազոյցի լէկկութեան, 1951,
էջ 250:

ԿԵՐԿԻՉԵԱՆ ՆՈՒՍԵՐ. - Սրտի ձայներ. (Բանա-
ստեղծութիւններ, պատմութեան, յօդուած-
նէր, նամակներ): Ֆրէզնոյ, ապ. «Նոր Օր»,
1951, էջ 370:

ՄԱՆՈՒԿԵԱՆ ՍԻՄԵՆ ԵՊԻՍ. - Լուսաշող զէմբեր եւ
Կեանք եւ խորհուրդ: Պոստոն, ապ. Հայկ Յ.
Թումաշեան, 1949, էջ 163:

ՄԱՐԳԱՐԵԱՆ ՊՕՂՈՍ. - Ենթակենսապրութիւն
Պօղոս Մարգարեանի եւ զիր բնատեքի անդա-
մաց պատմական: Նիւ Եորք, ապ. Եփրատ,
1951, էջ 240:

ՊԵՏԻԿԵԱՆ Ա. Ա. (ԱՊԱ). - Գրչանկարներ Պար-
տիպակ զիւղին: Փարիզ, ապ. Տէր Յակոբեան,
1950, էջ 720:

ՍԱՐԱՅԵԱՆ ԳՐԻԳՈՐ Ա. - Գրիգոր Նարեկացի եւ
իր ազօթմատեան (Նարեկացիի ծննդեան
1000-ամեակին տոթով): Հայերէն եւ անգլիե-
րէն լեզուներով: Ֆրէզնոյ, 1951, էջ 59:

ՍԻՄՈՆՈՅ Գ. - Տաղք եւ թատերգութիւնք. Հա-
տար Գ.: Նիւ Եորք, ապ. Կոչնակ, 1951, էջ 295:

ՏԷՐ ՄԻՆԱՍԵԱՆ Ա. - Գիրք եւ երգիծանք: Խա-
թանալու, 1951, էջ 175:

ՖԵՐԴՈՍԻ. - Շահնամէ (Հատուածներ). պարս-
կերէն բնագրէն թարգմանեց Միհրդատ Թիւրեաթ-
եան: Նիւ Եորք, ապ. Ա. Լէյլէկէան, 1951, էջ
159: (Երկու օրինակ):

ՖԷՐԱՀԵԱՆ Մ. Գ. - Զարմանալանք (Օրագրու-
թիւն զէպերու եւ զէմբերու շուրջ): Բոստոն,
ապ. Հայրենիք, 1949, էջ 122:

ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՅ
ԿԱԹՈՂԻԿՔ՝ ՎԻՃԱԿԻՆ 25-ամեայ զործունէու-
թեան (1925-1950): Աթէնք - Տարգմութի, 1951,
էջ 95 + 21 նկար (Երկու օրինակ):

ՅՈՐԵԼԻՆԱԿԱՆ ՏԱՐԻ (451-1951) 1500-ամեայ տա-
րեկարձ Սրբոց վարդանանց զօրավարաց մե-
րոց: Ֆիլատելֆիա, 1951 Ապրիլ 29:

ՊԱՏՄԱՐԳԱՐԵԱՆՅՅ Հայաստանեայ Առաքելական
Ուղղափառ Եկեղեցւոյ, եւ ԵՐԳԵՑՈՂՈՒ-
թիւնք..., ի զիր արկեալ եւ զաշուարեալ ի
ձեռն Կոմիտասայ վարդապետի, վերստին յար-
գարեալ վասն երկեսո դասու զպրաց ի ձեռն
վարդանայ Սարգսեան, հանդերձ բնագրու եւ
անգլերէն թարգմանութեամբ: Նիւ Եորք, ապ.
Տէլֆիք, 1950, էջ 314+95:

Khayyam Omar. - Rubaiyat. Renderet into
english verse by Edward Fitzgerald, with
paintings and decorations by Sarkis Katcha-
dourian. New York, Grosset et Dunlap publi-
shers, 1946, pg. 138.

Olan David. - Indian Murals and Sarkis Katcha-
dourian. New York, Delphic press, 1942,
pg. 45.

Thorossian H. - Histoire de la littérature Ar-
ménienne des origines jusqu'à nos jours.
(Préface de René Grousset). Paris 1951, pg. 384.

The Epic of Saint Vardan the Brave. - An a-
bridged translation of the History of Vardan
by the Vard. Yeghisheh (Elisa), translated
into English in 1830 by C. F. Neumann, with
a commentary and annotations by Vahan M.
Kurkjian. New York, 1951, pg. 103.



Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ-ի
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՅ

Ա. Հատոր

Նախակրթարանի

Դ. Դասարաններու համար

Սկիզբէն մինչեւ Քրիստոնէութեան մուտքը



Բ. Հատոր

Նախակրթարանի

Ե. Դասարաններու համար

Քրիստոնէութեան մուտքէն մինչեւ

Ռուբինեան թագաւորութեան անկումը

Հ. ԵՓՐԵՄ ՏԵՐ ԴԱԶԱՐԵԱՆ-ի

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԳՈՂՏՐԻԿ ՀԱՏՈՐԸ

ԹՎՓԱՌՈՂ ԱԼԻՔՆԵՐ

Փունջ մը հայրենատենչ ու քնարերգակ
ստանաւորներ, որոնք իրրեւ թրթռացում-
ներ երկատարող սրտի մը, ալիքներու նման
կը թափառին հորիզոնէ հորիզոն, ընթերց-
ման հաճելի պաշէր պատճառելով ամէնուն:

ԸՆԴ ՄԱՄԼՈՎ

Հ. ՄԵՍՐՈՊ Վ. ՃԱՆԱՇԵԱՆ-ի

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՐԴԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

« ԲԱԶՄԱՎԷՊ »-ի ԵՒ « ԳԵՂՈՒՆԻ »-ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

ԱՄԵՐԻԿԱ. Տորթ. Գասպար Կարոյեան, 536 Commonwealth Ave, Boston, Mass. U. S. A.

ԼՈՆՏՐՈ. Պր. Արշակ Սաֆրասեան, 18 Eton Villas, London N. W. 3.

ՓԱՐԻԶ. Պր. Բարգէն Պատտեան, 22 Rue Stendhal, Paris (20).

Կամ Եւերի Մուրասեան վարժարան, 26 Rue Troyon, Sèvres (S. et O.)

ՄԱՐՍԻԼԻԱ. Պր. Յովսէփ Ուլուհոճեան, 31, Rue St, Basile, Marseille (France).

ՊԵԼՃԻՔՈ. Պր. Ժան Փիլիպպոսեան rue d'Oultremont 61, Bruxelles. IV.

գրամական տուածումները կատարել C. C. P. 197185.

ԳԱՀԻՐԷ. Պր. Յ. Գաւմարեան C/o Drog. Impériale 6, Av. Fouad Ier.

ԱԳԵՔՍԵՆԴՐԻԱ. Շիւքի Միխիթարեան վարժարան, 18 Rue Station Shutz, Alexandrie.

ՊՈԼԵՏՈՍ ԵՅՐԷՍ. Պր. Փանոս Լյորնեքեան, C.nel Niceto Vega 5531.

ՍԻԻՐԻԱ և ԼԻԲԱՆՈՆ. Հ. Եսայի Գաուզեան, Միխիթ. վարժարան, Հալէպ.

ՊՈԼԻՍ. Հ. Յակոբոս վրդ. Բապղլըքեան, Collège mékhitariste, Péra, n. 30

ԽԱՐԹՈՒՄ. Պր. Յովսէփ Թըքքըրեան, Poste Restante, Khartoum (Sudan).